«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ

# Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2017թ.

## Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ........ 1
Ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ
ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն ........ 2
Ամփոփ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն ........ 3
Ամփոփ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ........ 4
Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն. ........ 5

pwc

## *ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետիրոջը և տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ընդգրկում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, և այդ ամսաթվին ավարտված տարվա ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, որոնք կազմվել են 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից: 2018թ. հունիսի 29-ին մենք արտահայտել ենք դրական կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ընդգրկում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

### *Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

### *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է՝ կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, հիմնվելով մեր կողմից *«Աուդիտորական եզրակացություն տրամադրելու նպատակով՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ իրականացվող ընթացակարգեր»* աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 810-ի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:

### *Եզրակացություն*

Մեր կարծիքով, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ընկերության՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են:

Ալտաֆ Տապիա
Տնօրեն

Լուսինե Թառլամազյան
Աուդիտոր

PricewaterhouseCoopers Armenia LLC

29 հունիսի 2018թ.
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

*«Փրայսուոթերհաուս Կուպերս Արմենիա» ՍՊԸ*
*ՀՀ, Երևան 0001, Հյուսիսային պողոտա 1, «ՆՈՐԴ» բիզնես կենտրոն, 6-րդ հարկ*
*Հեռ.՝(37410)512151, ֆաքս՝(37410)501341, www.pwc.com/am*

*«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ*
*Ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն*

| *հազ. ՀՀ դրամ* | 31 դեկտեմբերի 2017թ. | 31 դեկտեմբերի 2016թ. |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 28,251,602 | 33,292,529 |
| Ոչ նյութական ակտիվներ | 4,555,986 | 4,014,377 |
| Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր | 1,505,741 | 1,595,764 |
| Տրամադրված փոխառություններ | 3,450 | 11,730 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 4,285,243 | 3,676,035 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | 33,843 | 1,984 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 70,078 | 70,078 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **38,705,943** | **42,662,497** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | |
| Պաշարներ | 468,993 | 679,844 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 5,287,228 | 5,494,618 |
| Տրամադրված փոխառություններ | 104,461,575 | 97,961,109 |
| Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար | 5,728,868 | 6,095,791 |
| Այլ փոխհատուցվող հարկեր | 446,775 | 747,639 |
| Հետաձգված ծախսեր | 25,477 | 24,579 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 1,224,508 | 2,888,102 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **117,643,424** | **113,891,682** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | **156,349,367** | **156,554,179** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 18,837,709 | 18,837,709 |
| Չբաշխված շահույթ | 122,604,682 | 122,086,219 |
| Այլ պահուստներ | 2,825,656 | 2,825,656 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | **144,268,047** | **143,749,584** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | |
| Ակտիվների ապագործարկման գծով պահուստ | 899,808 | 773,984 |
| Հետաձգված եկամուտ | 40,509 | 66,548 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **940,317** | **840,532** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 7,046,012 | 7,798,614 |
| Հետաձգված եկամուտ | 54,047 | 81,070 |
| Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր | 1,603,566 | 1,688,771 |
| Ստացված կանխավճարներ | 929,631 | 1,096,762 |
| Պարտավորությունների և վճարների պահուստ | 915,781 | 975,514 |
| Այլ հարկային պարտավորություններ | 591,966 | 323,332 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **11,141,003** | **11,964,063** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **12,081,320** | **12,804,595** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | **156,349,367** | **156,554,179** |

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2018թ. հունիսի 29-ին:

| Անդրեյ Պյատախին<br>Գլխավոր տնօրեն | Դինա Նուրգկեխոդվա<br>Ֆինանսական տնօրեն | Ժիրայր Ղազոյան<br>Գլխավոր հաշվապահ |
|---|---|---|

## *Ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն*

| *հազ. ՀՀ դրամ* | 2017թ. | 2016թ. |
|---|---|---|
| Ծառայությունների մատուցումից հասույթ | 38,270,493 | 43,180,524 |
| Սարքավորումների իրացումից հասույթ | 2,094,004 | 1,921,106 |
| **Ընդամենը հասույթ** | **40,364,497** | **45,101,630** |
| Ծառայությունների ինքնարժեք | (27,189,683) | (29,803,853) |
| Իրացված սարքավորումների ինքնարժեք | (2,049,108) | (1,840,630) |
| **Ընդամենը վաճառքի ինքնարժեք** | **(29,238,791)** | **(31,644,483)** |
| **Համախառն շահույթ** | **11,125,706** | **13,457,147** |
| Այլ գործառնական եկամուտ | 2,042,434 | 483,577 |
| Ընդհանուր և վարչական ծախսեր | (7,343,931) | (6,096,032) |
| Իրացման ծախսեր | (3,522,504) | (3,517,215) |
| Այլ գործառնական ծախսեր | (4,281,374) | (1,898,139) |
| **Գործառնական գործունեությունից շահույթ** | **(1,979,669)** | **2,429,338** |
| Ֆինանսական եկամուտ | 3,516,385 | 4,040,470 |
| Ֆինանսական ծախսեր | (87,342) | (74,992) |
| Զուտ փոխարժեքային տարբերություններից օգուտ | 62,088 | 89,455 |
| **Շահույթ մինչև հարկումը** | **1,511,462** | **6,484,271** |
| Շահութահարկի գծով ծախս | (992,999) | (1,350,582) |
| **ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ** | **518,463** | **5,133,689** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ** | **518,463** | **5,133,689** |

| | Ընկերության սեփականատերերին վերագրելի | | | |
|---|---|---|---|---|
| *հազ. ՀՀ դրամ* | Կանոնադրական կապիտալ | Չբաշխված շահույթ | Այլ պահուստներ | Ընդամենը |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.** | **18,837,709** | **116,952,530** | **2,825,656** | **138,615,895** |
| Ընդամենը 2016թ. համապարփակ ֆինանսական արդյունք | - | 5,133,689 | - | 5,133,689 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.** | **18,837,709** | **122,086,219** | **2,825,656** | **143,749,584** |
| Ընդամենը 2017թ. համապարփակ ֆինանսական արդյունք | - | 518,463 | - | 518,463 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.** | **18,837,709** | **122,604,682** | **2,825,656** | **144,268,047** |

| *հազ. ՀՀ դրամ* | 2017թ. | 2016թ. |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հաճախորդներից ստացված վճարումներ | 45,556,351 | 51,744,498 |
| Ստացված տոկոսներ | 130,798 | 191,724 |
| Մուտքեր այլ գործառնական գործունեությունից | 232,754 | 730,135 |
| Ծառայությունների մատուցման գծով վճարումներ | (19,607,059) | (20,586,380) |
| Վճարումներ աշխատակիցներին | (7,624,538) | (7,780,551) |
| Վճարված շահութահարկ | (303,500) | (3,224,000) |
| Վճարումներ բյուջե, բացի շահութահարկը | (3,650,990) | (3,945,526) |
| Պաշարների մատակարարներին վճարումներ | (2,721,628) | (2,359,418) |
| Վարձակալության վճարներ | (1,409,593) | (1,366,491) |
| Գործուղումների համար կատարված վճարներ | (268,791) | (140,167) |
| Այլ գործունեությամբ օգտագործված դրամական միջոցներ | (509,738) | (384,172) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | **9,824,066** | **12,879,652** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (9,278,298) | (5,415,653) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | 798,795 | 124,319 |
| Մայր կազմակերպությանը տրամադրված փոխառություններ | (103,377,786) | (9,587,600) |
| Տրամադրված փոխառության մարում | 100,346,432 | 8,280 |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ** | **(11,510,857)** | **(14,870,654)** |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 23,197 | (7,985) |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին** | **2,888,102** | **4,887,089** |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին** | **1,224,508** | **2,888,102** |

*Ծանոթագրություն*

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ -ն պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, և այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, որոնք կազմվել են 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից:

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթում ներկայացված բոլոր բացահայտումները, մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ ծանոթագրությունները, որոնց բացահայտումը պահանջվում է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարելի է ստանալ Ընկերության ղեկավարությունից՝ ըստ պահանջի: